




ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԵՍԸ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

1963 թվականի վերջին օրն է, երեքշաբթի, դեկտեմբերի 31-ը:

Հոգևոր ձեմարանի ուսանողությունը, գոհացուցիչ արդյունքներով վերջացրած ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննությունները, ձեմարանի հանդիսասրահում, ամանորի ավանդական սեղանների շուրջ հավաքված, հրաժեշտ է տալիս հավերժի գիրկը անցնող 1963 թվականին և նոր եռանդով, նոր հույսերով, հոգեշահ խոհերով և ազնիվ մտադրություններով դիմավորում է նոր տարին՝ 1964 թվականը:

Երեկոյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետը, շրջապատված Գերագույն Հոգևոր նորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներով և Մայր Աթոռի միաբանության ողջ կազմով, հանդիսավորապես մուտք է գործում սրահ, խանդավառ ծափերի ներքո:

Դահլիճում ուրախ են բոլորը, միաբան, ուսանող, պաշտոնյա և աշխատակից, իրենց պարտքը կատարած մարդկանց գոհունակությամբ և արդար խղճմտանքով, ինչպես նաև երախտագիտությամբ և սիրով առցյված ղեպի համադգային այս սուրբ հաստատությունը, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է և ղեպի նրա Գահակալը՝ նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղգին Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Շատ հաճելի և իմաստալից է նոր տարին դիմավորել հարեների հողի խաղաղ ու ազատ պայմանների մեջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհափառ Հայրապետի շնորհաբեր ներկայությամբ:

Ամանորի ավանդական սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը:

Հոտնկայս ունկնդրվում է Հայկական ՍՍՌ Պետական հիմնի նվազը և «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հոգևոր ձեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը ղեկավարում է նոր տարվա սեղանը:

Ձեմարանի դահլիճում ամանորի առթիվ կազմակերպված այս երեկույթն ունեւր նաև ղեղարվիստական բաժին:

Երեկույթը բանալով, վերատեսուչ սրբադանն ասում է.

«Վեհափառ Տեր.

Հին տարվա վերջին երեկոն է և քիչ հետո՝ նոր տարվան առաջին արշալույսը:

Երկու հակապատկերներ: Մեկուն կհաջորդե խավար գիշերը, մյուսին՝ արևաշող ցերեկը:

Անցնող հին տարվան հետ, մեղմն յուրաքանչյուրը կանգրագանա իր ամբողջ գործունեության և նժարի մեջ կդնեն իր գործած լավ և վատ արարքները և նոր տարվան սեմին կջանա զանոնք սրբագրել գալիք օրերու համար:

Կիտրհիմ, թե յուրաքանչյուրիս համար անցնող ամեն րոպե, ժամ կամ օր, պետք է դառնա նոր տարվան ծագող արշալույս մը: Մեր գործունեության հաշվահարդարը պետք է կատարենք մեր անմիջական գործերեն վերջ, ամեն օր, ամեն ժամ, և ոչ թե ձևակաւորեն տարին մեկ անգամ: Ահա այդ գիտակցությունն է մեղ համար ճշմարիտ նոր կյան-

քի մը, նոր գործունեության մը սկիզբը: Պարագան նույնն է նաև ուսանողներու համար: Յուրաքանչյուր դասեն վերջ, ամեն ուսանող կրնա անալիզ խղճի ձայնին, թե ինչքանով կրցավ արժեքավորել իր ժամանակը ապագայի հաշվին: Քննությունները, վկայականները պատրանքներ են, եթե որեւէ ուսանող իր գլուխը չէ լեցուցած նման այն հասկին, որ ցորենի հատիկներու ծանրութենեն դեպի գետինը կխոնարհի:

Քաղցր է մեզ համար նոր տարվան սեմին այս տեսակ խորհրդածությունը:

Վեհափառ Տեր, իրականացավ անցնող տարվան այս երեկոյթին մեր կողմն Ձեզ տրված կաղանդներ անալիզներու բաժնին մեջ, երբ կըսեինք. «Վեհափառ Հայրապետին՝ Երուսաղեմ ուխտի երթալու համար մասնավոր ինքնաթիռ մը»:

Ես, որպես Ձեր ջրախմբի անդամներեն մեկը դեպի Լոնդոն, Երուսաղեմ, Կահիրե և Աղեքսանդրիա, ականատես եղա այն փառավոր ընդունելություններուն, որոնք կատարեցին Ձեզ տեղական իշխանությունները և հայ ժողովուրդը: Այս բոլորը Ձեր անձինք և հանդես պսակն են այն բոլոր անդամներուն, զորս Դուք մատուցիք հոգևոր մեր Ս. Եկեղեցւոյ և ի շահ մեր ժողովուրդին և ժողկող մեր Մայր Հայրենիքին: Տեսա մեր ժողովուրդի հպարտության ժպիտները և ուրախության արցունքները, երբ Ձեր անձինք մեջ անոնց կայցելել Ս. Էջմիածինը և Մայր Հայրենիքը, մեկը մյուսով պայմանավոր Սփյուռքի հայության համար: Որքան ժամանակ ուր կան Ս. Էջմիածինը և Մայր Հայրենիքը, կա ու կապրի հայ ժողովուրդը հայրենիքի սիրով ու երազով և Ս. Էջմիածնի օրհնությամբ, ինչ պայմաններու տակ ալ գտնվի արտասահմանի հեռավոր ափերուն վրա:

Ձերդ Ս. Օծությունը, թույլ տվեք այս հանդիսավոր երեկոյին, ի դիմաց Ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանի անձնակազմի և ուսանողության, որպես վերատեսուչը այս սրբազան հարկին, Ձեզ հայտնել իմ սրտագին շնորհակալությունը, փոխարեն այն բոլորանվեր զոհողությանց, զորս կտածեք հանդես Հոգևոր ձեմարանի:

Շնորհակալությո՜ւն մեր հայրենի հարազատ կառավարության, դեպի Հոգևոր ձեմարանը ուղարկության և բարոյական աջակցության համար:

Շնորհակալությո՜ւն նաև Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր Խորհուրդի և վերստուգիչ հանձնաժողովի անդամներուն, Հոգևոր ձեմարանի դասախոսական կազմին, բովանդակ պաշտոնեական և մեր ձեմարանի բոլոր բարերարներուն, որոնցմ յուրաքանչյուրը, իր շահով և ձևով, սատար

կհանդիսանա մեր այս պատասխանատու աշխատանքի իրագործման ճանապարհին:

Բոլորս միասին, հոտնկայս, խմենք Հայաստանի անուշ գինիի մեր առաջին բաժակը, կաղանդի երեկոյան այս խրախճանքին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, մեր սիրելի Վեհափառ Հայրապետի քաղցր կենացը, հայցելով Արարչին խաղաղ և երկար տարիներու հայրապետությունը:

Բոլոր ներկաները, հոտնկայս, բաժակ են բարձրացնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության և Վեհափառ Հայրապետի կենաց: Ամբողջ դահլիճով մեկ հնչում է ցնծագին և տոնական «Էջ Միածինն ի Հօրէ՛» շարականը:

Ամանորի սեղանների շուրջ ստեղծվում է ընտանեկան մթնոլորտ:

Ձեմարանի ուսանողական երգչախումբը երգում է ցնծագին «Այսօր տօն է Ս. Մերնդեան» տաղը, «Խնջուքի երգ», «Հարսանեկան երգեր», «Խնկի ծառ», «Շողեր ջան» (Կոմիտասի), «Քամանչա», «Ուստի՛ կու քաս» (Մայաթ-Նովայի), և «Ջան Հայրենիք» խմբերգերը:

Այսարանի ուսանող Գրիգոր Բունիսթյանը արտասանում է Վահագն Դավթյանի «Նոր տարի»-ն, նույն դասարանի ուսանող Ղևոնդ Վարդանյանը՝ Մարո Մարգարյանի «Հայրենիք»-ը, Բյուրաքանի ուսանող Նիկոլ Բաղդամյանը՝ Սիլվա Կապուտիկյանի «Լինել չլինել» բանաստեղծությունը:

Բարեշնորհ ժիրայր սարկավագ Գալիադյանը, հանուն Հոգևոր ձեմարանի ուսանողության, կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված մի գեղեցիկ ուղերձ՝ երախտագետ զգացումներով և կրոնաբույր խոհերով հագեցած, նոր տաղավա բարեբախտիկ առիթով:

Ա. դասարանի ուսանող Արարատ Գալստյանը դաշնամուրի վրա կատարում է Առնո Բաբաջանյանի «Էքսպրոմտ»-ը:

Երեկոյթի ժամանակ ջերմ, հայրենասիրական և եկեղեցասիրական հուզիչ ելույթներ են ունենում լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեդյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Հանդեսի անալիզներին բաժնում գերաշնորհ Տ. Հակազուն արքեպիսկոպոսը ինքնագիր դիպուկ «կաղանչեք»-ներ է բաժանում բոլորին, ընդհանուր ծիծաղի և խանդավառության մեջ:

Ուրախ ու խանդավառ սեղանների շուրջ ժամերն անցնում են արագ, բայց բովանդակալից, հոգեշահ ապրումներով, խոհերով, հուզերով ծանրաբեռն:

Օրհնության, պատգամի ժամն է: Խոսք է առնում Վեհափառ Հայրապետը խորապես

հուղված, նոր տարվա հատուկ խոհերով, գալիք օրերի պայծառ լավատեսությամբ համակված:

Խոսում է Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ապագա գործունեության մասին, խոսում հավատով, ջերմությամբ, մեր երկրի և մեր ժողովրդի պայծառ ապագայի, աշխարհում խաղաղության հաստատման, ժողովուրդների խաղաղ գոյակցության մասին: Նորին Ս. Օծության խոսքերը բխում են նրա ջերմ, հայրենասեր սրտից:

Ամբողջ դահլիճը հոտնկայա ծափահարում է, բաժանելով Վեհափառ Հայրապետի խոհերն ու զգացումները:

Այնուհետև, Նորին Ս. Օծությունը հայրական իմաստալից խրատականներ է տալիս միաբանության, ուսանողության, վանքի պաշտոնեության՝ խանդավառությամբ, սրբությանը աշխատելու Մայր Աթոռում, կատարելու իրենց հայրենասիրական պարտականությունները նաև մեր ժողովրդի և մեր հայրենիքի հանդեպ:

Վեհափառ Հայրապետը արտասահման իր շորորդ ուղևորության տպավորությունները պատմելով, իր եռանդով, հավատով և լավատեսությամբ խանդավառում է բոլոր ներկաներին, գոտեպնդում աննահանջ սիրով և նվիրումով աշխատելու ձեռք-ձեռքի տված, հօգուտ Մայր Աթոռի և մեր ժողովրդի:

Վեհափառ Հայրապետի պատգամը, խոսքերը, խրատականը խորապես հուղում են բոլոր ներկաների սրտերն ու հոգիները, տպավորվելով յուրաքանչյուրի հիշողության մեջ և սրտում:

Վեհափառ Հայրապետը 1964 թվականը դիմավորում է Հոգևոր Ճեմարանում, Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության, իր երեց և կրտսեր զավակների հետ, բազմած ամանոցի նույն սեղանի շուրջ:

Ուշ գիշերին, Նորին Ս. Օծության «Պահպանիչ»-ով և «Ամեն հայի սրտից բխած» Հայրապետական մաղթերով վերջանում է նոր տարվան նվիրված այս հավաքույթը:

